

Doi:10.54503/0135-0536-2022.2-201

ԵՐԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ.
ՍԱՀԱԿ ԱՄԱՏՈՒՆԻ ԵՎ ԿՈՄԻՏԱՍ
(Ժամանակակիցների հուշերը)*

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Ս. վրդ. Ամատունի, Կոմիտաս, Էջմիածնի Գևորգյան ճեմարան, Մ. Աբեղյան, Ա. Սեդրակյան, Շ. Սիմոն, Ս. Վրացյան, Էջմիածին, «Ներսիսյան լիճ», Օշական, երաժշտական ֆուկլոր, ժողովրդական երգ:

Նախաբան

XIX դ. 70—80-ականները Հայ երաժշտական ֆուկլորագիտության կայացման շրջանն էր, որի առաջնային փուլը ժողովրդական երգի գրառումն էր: Ազգային երգի ձայնագրման և պահպանման գործընթացում մեծ դեր ունեցան Քրիստափոր Կարա-Մուրզան, Նիկողայոս Տիգրանյանը, Մակար Եկմալյանը, Արշակ Բրուտյանը, Ստեփան Դեմուրյանը: Այդ մեծանուն Հայոզիների շարքում իր պատվավոր տեղն ունի նաև Սահակ վրդ. Ամատունին՝ Հայ երաժշտական բանահավաքչության ակունքներում կանգնած երախտավորը: Նա առաջիններից էր, ով գրառեց Հայ գեղջուկի երգը և կազմեց ժողովրդական երգերի «Ձայնագրյալ ժողովածու»-ն: Էջմիածնի Գևորգյան ճեմարանի Հիմնադրման առաջին օրից Ամատունին դասավանդել է «Եկեղեցական երաժշտություն և ձայնագրություն» առարկան:

Ժամանակակիցների վկայությամբ՝ ճեմարանում սովորելու տարիներին պատանի Սողոմոնի՝ ապագա Կոմիտասի սիրելի ուսուցիչը եղել է Ամատունին, ով ընդամենը մեկ տարի է նրան դասավանդել, բայց Հենց Ամատունու գեղագիտական Հայացքների ազդեցության ներքո է ձևավորվել Կոմիտասը: Նկատենք, որ ժողովրդական երգի իր անդրանիկ գրառումը վերջինս կատարել է Ամատունուն ճանաչելուց անմիջապես հետո՝ 1884-ին:

Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ բացեց Հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ. սեփական ժողովրդի գեղջկական երգն ու պարը գրառելով՝ նա մոռացությունից փրկեց Հայ ազգի բազմադարյա երաժշտական մշակույթը:

Հայ Առաքելական սուրբ եկեղեցու արժանի զավակներ Ս. վրդ. Ամատունու և Կոմիտաս Վարդապետի «Համագործակցությունը» նոր, անհայտ էջեր է բացահայտում երկու երևելիների առնչություններում:

* Ներկայացվել է 09. XII. 2021 թ., գրախոսվել է 20. XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 23. V. 2022 թ.: Զեկուցումը կարդացվել է 2019 թ. նոյեմբերի 29—30-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ գումարված «Կոմիտաս—150» գիտական նստաշրջանում:

Սահակ վրդ. Ամատունու գործունեությունը էջմիածնի Գևորգյան ճեմարանում

Շարականագետ, բառարանագետ, ձայնագրագետ, մատենագետ Ս. վրդ. Ամատունին (1856–1920)¹ այն համեստ գիտնականներից է, ով ամբողջ կյանքում մեղվաջան ու անտրտուն աշխատել է իրեն նվիրելով հայրենիքին: Հայ Առաքելական եկեղեցում միակերպ երգեցողություն սահմանելու գործում Ամատունին մեծապես աջակցել է 1874-ին Կ. Պոլսից հրավիրված հմուտ ձայնագրագետ Նիկողայոս Թաշճյանին՝ էջմիածնական երգեցողությունը շարականները ձայնագրելու և «Շարակնոցը» հրատարակման պատրաստելու գործընթացին: Վարդապետի «Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ»² և «Հայոց բառ ու բան»³ հիմնարար ուսումնասիրությունները հայ մտավորականության կողմից արժանացել են ամենաբարձր գնահատականների: Նկատենք՝ էջմիածնի մատենադարանը կարգավորելուց հետո Ամատունուն հանձնարարվեց բարեկարգել և կանոնավորել Սևանավանքի մատենադարանը, որը, ըստ էության, Հայաստանի առաջին ու ամենահին մատենադարաններից մեկն էր (IV–XIX դդ.՝ ավելի քան 1500 տարեկան): Այդ քրտնաջան աշխատանքը պաշտոնական էջմիածինը շատ բարձր գնահատեց. կաթողիկոսության տեղակալ Երեմիա եպիսկոպոսը 1892 թ. ապրիլի 22-ի հայրապետական կոնդակով Սահակ վարդապետին իր հնգամյա անձնվեր ծառայության համար, որպես պատվո նշան, շնորհեց ծաղկյա փիղոն, իսկ 1894 թ. հոկտեմբերի 6-ի կոնդակով Խրիմյան Հայրիկը, ողջունելով աշխատանքում ձեռք բերած հաջողությունները, հոգեշնորհ Ս. վրդ. Ամատունուն թանկարժեք քարերով զարդարված վարդապետական խաչ նվիրեց. «Վասն որոյ ի նշան գոհունակութեան Մերոյ, ... շնորհել Ձեզ գխաչ վարդապետական ականակուռ կրել ի լանջս, ի պարծանս վաստակոց Ձերոց»⁴: Ս. վրդ. Ամատունու հանրահայտ լուսանկարում նրա լանջը զարդարում է հենց այդ խաչը:

Ս. վրդ. Ամատունին սովորական տիրացու չէր կամ կղերական վարդապետ, այլ առաջավոր գաղափարներով ու ազգային արժեքներով խանդավառված մանկավարժ և ուսուցիչ: Հայրենասիրական ոգով ներշնչված նրա բանաստեղծական կերտվածքները՝ «Ի քաջութիւն Հայկայ»⁵, «Թէ գիւղ, թէ քաղաք», «Աշխարհէ աշխարհ», «Քան ձեզ Մասիս, Արագած», հաճախ հրապարակում էր ժամանակի հայտնի երգարաններում: Այդպիսին էր Ս. վրդ. Ամա-

¹ Ս. վրդ. Ամատունու մահվան տարեթիվի վերաբերյալ տվյալները հակասական են: Նրա կյանքն ու ստեղծագործական ուղին առաջին անգամ լուսաբանել է Սանդրո Բեհրուդյանը (Բեհրուդյան. 1970, 31–35), ով առանց օր և ամսաթվի հիշատակելու նշել է 1917 թ-ը: «Նշանակավոր ճեմարականներ»-ում նշված է 1919 թ. դեկտեմբերի 28-ը (Հովհաննիսյան. 2009, 44), իսկ Ա. Աղամյանի հոդվածում՝ 1920 թ-ի հունվարի 28-ը (Աղամյան. 1973, 105): Ս. վրդ. Ամատունու գերեզմանն Օշականում է՝ Թուխ Մանուկ մատուռի կողքը, սակայն տապանաքարի վրայի մարմարե հուշագիրը չի պահպանվել:

² Ամատունի. 1911:

³ Ամատունի. 1912:

⁴ Բեհրուդյան. 1970, 33:

⁵ Նոր ազգային երգարան. 1878, № 39, 62:

⁶ Սոխակ Հայաստանի. 1888, 102–104:

⁷ Սոխակ Հայաստանի. 1890, 8–10:

⁸ Սոխակ Հայաստանի. 1912, 315–318:

տունին և այդպիսին նրան ճանաչեց Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին 15-ամյա Սողոմոն Սողոմոնյանը, քանզի նրա մեջ տեսավ հայրենասիրական գաղափարներով, սեփական ազգի երաժշտական մշակույթի խնդիրներով տարված ու մտահոգ մտավորականի: Տարիներ անց ինքը՝ Կոմիտասն էր այդպիսին դառնալու:

Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի դպրոցական բաժնում դասավանդվում էր հայոց և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, հայ մատենագրություն, հայոց ու օտար լեզուներ՝ ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բնագիտություն, տիեզերագիտություն, մաթեմատիկա, Սուրբ Գիրք, տրամաբանություն, իսկ լսարանական բաժնում՝ աշխարհաբար և գրաբար (քննական) լեզուները, եկեղեցական մատենագրություն, հայ և ընդհանուր եվրոպական գրականություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, մանկավարժություն, քաղաքատնտեսություն, հայ եկեղեցական իրավունք, ծիսագիտություն, հին հունարեն և այլն: Ճեմարանի պարտադիր առարկաներից էր «Եկեղեցական երաժշտություն»-ը կամ, ինչպես ասում էին՝ «Ձայնագրություն»-ը: Ծրագրին համապատասխան առարկայի ուսուցումը երեք տարի էր, և այդ ժամանակահատվածում աշակերտ Սողոմոն Սողոմոնյանին «ի Քյոթահայէ» «Ձայնագրություն» առարկան դասավանդել է Ղևոնդ վրդ. Հովակիմյանը (1881–1884 ուսումնական տարիներ): Հայտնի է, որ Սողոմոնի երկրորդ «Բ» դասարանի փոխադրական քննությունների արդյունքներն այնքան էլ հուսադրող չէին, և ուսաց լեզվի վերաքննության պատճառով պատանին ստիպված մնաց նույն դասարանում⁹: 1884–1885 ուսումնական տարում «Ձայնագրություն» առարկայի ուսուցիչ Ղ. վրդ. Հովակիմյանին փոխարինեց Ս. սարկավազ Ամատունին, ով արդեն հմուտ շարականագետի, մատենագետի, ձայնագրագետի համբավ ուներ¹⁰:

Շահան Սիմոնի հուշերը վարդապետների մասին

Ս. վրդ. Ամատունու և Կոմիտասի առնչությունների մասին բացառիկ արժեք են ներկայացնում նախկին ճեմարանական, իրադարձությունների ականատես և Կոմիտասի համադասարանցի Շ. Սիմոնի հիշողությունները: Ծագումով ախալքալաքցի Շ. Սիմոնը Կոմիտասի մասին իր հուշերում գրում է. «Ճեմարանի 2-րդ դասարանում մեր երգեցողության ուսուցիչը Սահակ սարկավազ Ամատունին էր: Սա էլ Օշական գյուղից էր և Նիկողայոս Թաշճյանին աշակերտել էր՝ լինելով Մակար Եկմալյանի դասակիցը: Ամատունին հմուտ էր հայկական ձայնագրության, եկեղեցական շարականների Պոլսի եղանակներին, բայց ինքը, մեզ դաս տալիս, գերադասում էր Էջմիածնի հին եղանակները, այդտեղից էլ իրեն դասանյութ էր ընտրում: Նրա սովորեցրած երգերը մեծ մասամբ գրաբար էին և կամ միջնադարյան-աշուղական հայերենով:

⁹ Ս ա մ վ ե լ յ ա ն. 2007, 102:

¹⁰ Հասակակիցներ Սահակ Ամատունին և Մակար Եկմալյանը Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցի լավագույն սաներն էին. նրանց Նիկողայոս Թաշճյանն ընտրել էր «Շարակնոցի» հրատարակման նախապատրաստական աշխատանքներում: 1881 թ. ապրիլին «չնորհունակ Սարկավազ Սահակայ Գեորգեան օշականցույ» ձայնագրեց մեծաչնորհ Ղևոնդ վրդ. Հովակիմյանի երգած շարականները (տե՛ս Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց. 1882, ք):

Սահակ սարկավազի ձայնը մեղմ էր և դուրեկան, խոսակցությունը ցածր ու համեստ: Սողոմոնը նրա բոլոր ձևերը ընդօրինակում էր, սովորեցրած երգերը՝ անգիր անում: Դրանք էին՝ «Երկինք զուարթ ականարկէր», «Ես յարկս պերճ», «Ահա աշնան առաւօտ», «Ի կանխէտ տեսչութենէդ», «Էյ, իմ վարդիկ» և այլն, կամ Գամառ-Քաթիպայից վերցրած՝ «Թող փչէ քամին պաղ-պաղ», «Մեր խեղճ ազգը ուսում չունի», «Հիմի էլ լուենք» և այլն: Սահակ Ամատունին ուներ նաև բանաստեղծական շնորհք. նա երբեմն իրենից է եղանակում. «Նայեցէ՛ք Արմաւրին՝ ո՛վ հայ պատանիք», «Տխուր-տխուր ձայն եմ տալիս իմ Ախուրեանեն», երբեմն էլ իր գրած՝ հեղինակած ոտանավորները կարդում էր հանդիսավոր օրերին՝ ճեմարանի հանդիսարանում: Նրա նմանությունը մի քիչ նման էր Գամառ-Քաթիպային, որից մի քանի ոտանավորներ տպված կան «Սոխակ Հայաստանի» երգարանում: Հենց այդպիսի բանաստեղծական ձիրք և երգեցողության հմտություն ուներ և մեր Սողոմոնը: Այդպիսի տոն օրերին Կոմիտասը կարդում էր նաև իր բանաստեղծությունները, որոնք այդ տարիներին փոքր ինչ նմանություն ունեին Ղևոնդ Ալիշանի պոեզիային»¹¹:

Ս. Ամատունու և Կոմիտասի հայ գեղջկական երգերի առաջին ձայնագրությունները (1884 թ.)

1884 թ. բեկումնային էր ինչպես Ս. սարկավազ Ամատունու, այնպես էլ Կոմիտասի կյանքում: Էջմիածնի Սինոդի որոշմամբ վերջինս հունվարին մեկնեց Սյունյաց աշխարհի Երնջակ գյուղ՝ ս. Ապրակունյաց վանքի վանահայր Գրիգոր արքեպիսկոպոս Հովբեանից ձայնագրելու «զարականս և այլ եկեղեցական երգեցողություն ըստ հին եղանակի Աթոռոյս, որպէսզի ըստ այնմ տպագրութեամբ ի լոյս ածցի և հրատարակեսցի վասն միաձև երգեցողութեան յամենայն եկեղեցիս Հայոց ...»¹²: Տարիներ անց Ս. վրդ. Ամատունու այդ քրտնաջան աշխատանքն ամբողջացվեց վերը նշված «Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» ուսումնասիրությունում:

Ժողովրդի մեջ արմատացնելով հայեցի մտածողությունը՝ մտավորականությունը կանգնած էր կարևոր խնդրի առաջ. իսկ արդյո՞ք հայն ունի ինքնուրույն երաժշտություն: Ս. Ամատունին գիտակցում էր, որ միայն հոգևոր երաժշտական մշակույթի ձայնագրման, հավաքման և ուսումնասիրման գործընթացը բավարար չէ: Լուսավորյալ այրերից նա առաջիններից էր, ով հայացքը դարձրեց դեպի ժողովրդական երգը՝ դեպի հայ շինականի երգարվեստը: Սուրբ Սինոդից ստանալով թույլտվություն՝ Ամատունին Արարատյան դաշտավայրի բնակիչներից սկսեց ձայնագրել ժողովրդական գեղջկական երգեր և 1884-ին կազմեց իր ժողովրդական երգերի «Ձայնագրեալ ժողովածու»-ն¹³:

¹¹ Տե՛ս Շ ա հ ա ն Ս ի մ ո ն. 1954, 25:

¹² Բ ե հ ք ու դ յ ա ն. 1970, 32:

¹³ Ս. Ամատունու անձնական արխիվը պահվում է Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանում (այսուհետ՝ Մատենադարան), թղթ. 34–40, և միայն «Ձայնագրյալ ժողովածու»-ն գտնվում է ՀՀ գրականության և արվեստի թանգարանի (այսուհետ՝ ԳԱԹ) ժողովրդական երաժշտության բաժնում: Ժողովածուին առաջինն անդրադարձել է Երեսնի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) ուսանող Նազելի Նազարյանը՝ «Սահակ վրդ. Ամատունին և նրա ժողովրդական երգերի ձայնա-

Ձեռագիր ժողովածուի նախաբանում Ս. Ամատունին գրում է. «Եթե Մովսես Խորենացին երբեմն հայ ազգի մի անգուգական բարերարի առաջ դրեց որպես Հայկազանց թագաւորների, նույնպես և Գողթն գաւառի կորովամիտ որդւոց պատմութիւնը, ընդ նմին և նոցա՝ հայ ազգի մի քանի քաջագործ վեհապետների բոլոր շինած և բամբերներով երգուած հատրնտիր երգերը, ես ևս կընեմ ահաւասիկ իմ ազգի բանաստեղծների առաջ Արագածի և Մասիաց ոտուն մոտ՝ և նոցա զվարճ հովիտների մէջ բնակւող հայ ազգի ժողովդոց սրտառուչ երգերի մի հավաքածուն, որոնք իրենց իմաստից գեղեցկութեամբ և ձայնից քաղցրութեան աներկբայ են, որ ոչ պակաս Գողթնեցւոց երգերի հափ գին ու հարգ պիտի ունենան նույն բանասերների առաջ, և հետեւապես իմ այս աշխատութեան վրա նույնչափ պիտի խնդան և բերկրին, որչափ Մովսեսի գրուածքների վրա խնդաց ու բերկրեց հայրենասեր Սահակ Բագրատունին: Այս ժողովրդական երգերի մի մասը առնված է «Քնար Մշեցւոց և Վանեցւոց» երգարաններից (գործ Արիստակէս եպիս. Սեդրակէն, տպեալ ի տպարանի Մայր աթոռոյս, ի 1874 թ.), մի մասը՝ «Քնար հայկականից», գործ Մ. Միանաբանցի, տպեալ ի Ս. Պետերբուրգ, 1870 թ., իսկ մի մասը ժողովեցի 1883 թ., թույլտուութեամբ Ս. Սինոդի ս. Էջմիածնի, անձամբ շրջագայելով Արարատեան նահանգի հայաբնակ գյուղերին»¹⁴:

Սակայն հոգեւոր և ժողովրդական երաժշտությունից բացի՝ Ամատունուն զբաղեցնում էր նաև հայ շինականի «խոսքը»: Նա իր կյանքի կարևոր գործն էր համարում տեղացիներից ժողովրդական բառ և դարձվածքներ քաղելով հավաքել Արարատյան բարբառի ոճերն ու խոսակցական առանձնահատկությունները: Հետագայում, երբ լույս տեսավ Ս. վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ը (1912 թ.), արքեպիսկոպոս Մաղաքիա Օրմանյանն Ամատունուն ուղղված նամակներից մեկում նշեց. «Իմ համոզմամբ այն ամեն աշխատութիւն, որ նախնեաց բեկորները կորստէ ու մոռացութենէ ազատելու նպատակն ունի, գնահատելի է յոյժ և կը գնահատեմ Ձեր այդ աշխատությունն ալ ...»¹⁵:

Ինչպես ասվեց, Ամատունին ընդամենը մեկ տարի է դասավանդել Կոմիտասին՝ 1884–1885 թթ., սակայն դա էլ բավական էր, որ նա անմոռաց նվիրվի հայ շինականի երգին ու պարին: Այդ ժամանակահատվածը նշանակալի է նրանով, որ Կոմիտասն առաջին անգամ ձայնագրում է հայ գեղջուկի երգը: 1884 թ. Բարեկենդանի տոնի կապակցությամբ հյուրընկալվելով իր ձեմարանական դասընկերոջ տանը, որը Քյորփալուից էր (այժմ՝ Արմավիրի մարզի Արշալույս գյուղ)՝ Սողոմոն Սողոմոնյանը «շինականի ախոռում առաջին անգամ լսում է ժողովրդական երգը, որը նրա համար մի հայտնություն էր:

գրյալ ժողովածուն» դիպլոմային աշխատանքում (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Մարգարիտ Բրուտյան, Երևան, 1993): Ս. Ամատունու՝ նոր հայկական (Հ. Լիմոնջյանի համակարգը) նոտագրությամբ արված 102 երգից բաղկացած ձեռագիր ժողովածուն Ն. Նազարյանը փոխադրել է եվրոպական նոտագրության և նախապատրաստել տպագրության: Ժողովածուն հնարավոր եղավ հրատարակել իր ստեղծումից միայն 130 տարի անց՝ 2014 թ., ԵՊԿ-ի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարի IX պրակում:

¹⁴ ԳԱԹ, Երգարանների ֆոնդ, № 33, Սահակ Ամատունու երգարանի նախաբան:

¹⁵ Մատենադարան, Ս. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 137:

Անմիջապես ձայնագրելով լսած երգը, նա խնդրում է, որ ուրիշներն էլ երգեն և դարձյալ ձայնագրում է»¹⁶: Այսպիսով, 1884 թ. փետրվարի 19-ը Կոմիտասի ժողովրդական երգի գրառման ամենավաղ վկայությունն է:

Քաջ Հայտնի է, որ Կոմիտասը հիանալի ձայն ուներ և մանուկ հասակից երգում էր հայրենի Քյոթահիայում լսած գեղջկական երգերը. նրա փայլուն լսողությունը ծանոթ էին ինչպես հոգևոր, այնպես էլ ժողովրդական երգերը (թուրքերեն): Սակայն սիրել ու երգելը մի բան է, իսկ այդ երգերը ձայնագրել ու հավաքելը՝ մեկ այլ: Որտեղի՞ց պատանի Սողոմոնի մեջ հայ չինականի երգի գրառման հարցի կարևորման գիտակցումը ... Արդյո՞ք մինչև 1884 թ. Կոմիտասն առիթ չէր ունեցել լսելու հայ գեղջուկի երգը՝ լսելու և գրառելու ... Նվ, վերջապես, Ղ. վրդ. Հովակիմյանը երեք տարի դասավանդել է Կոմիտասին «Հայկական ձայնագրություն» առարկան, ուստի նա կատարելապես տիրապետում էր Հ. Լիմոնջյանի նոր հայկական նոտագրության համակարգին, և ժողովրդական երգ ձայնագրելը տեխնիկապես միանգամայն հնարավոր էր կատարել: Այդուհանդերձ, առաջին գրառումը, ինչպես արդեն նշվեց, տեղի ունեցավ միայն 1884-ին՝ Ս. վրդ. Ամատունուն ճանաչելուց հետո:

Մեր խորին համոզմամբ, 1884–1885 թթ. ճեմարանում ուսումնառության ընթացքում Կոմիտասին քաջ ծանոթ է եղել նաև Ս. վրդ. Ամատունու գեղջկական երգերի անտիպ «Ձայնագրեալ ժողովածու»-ն: Դրա վառ ապացույցն այն է, որ վերջինիս գրառած երգերի զգալի մասը հետագայում ձայնագրել է նաև Կոմիտասը: Ավելին՝ Ամատունու, ինչպես և Կոմիտասի համար սկզբնական աշխատանքներում ուղեցույց է եղել եկեղեցական գործիչ, պատմաբան, բանասեր Արիստակես Սեդրակյանի (1845–1906) «Քնար մշեցուց և վանեցուց» ժողովրդական երգերի բանաստեղծական տեքստերը: Այս առիթով Մանուկ Աբեղյանը գրում է. «... վերադարձա (Էջմիածին – Մ. Տ.) կարճ ժամանակով 1890 թվի հունիս ամսին: Այդ ժամանակ Կոմիտասն արդեն լրջությամբ զբաղվում էր ժողովրդական երգեր ձայնագրելով և բավականին շատ ուներ ժողոված: Բնականաբար, մեր խոսակցության նյութը այդ մասին էր: Ես նրան խորհուրդ տվի ձեռք բերել մինչև այդ հրատարակված ժողովրդական բանաստեղծությունների գրքերը և որոշել ու ձայնագրել տպագրված երգերի եղանակները: Նա հավանեց այդ միտքը, միասին գնացինք տպարան և նա գնեց 1874 թվին Վաղարշապատում տպված «Քնար մշեցուց և վանեցուց» ժողովածուն՝ Արիստակես վարդապետ Սեդրակյանի: Հետագայում ես իմացա, որ նա ուրիշ ժողովածուներ ձեռք չէր բերել, բայց Սեդրակյանի այդ գրքի մեջ եղած բոլոր երգերի եղանակները գտել ու ձայնագրել էր: Կոմիտասն այդ գիրքը հետո նվիրեց ինձ հիշատակ՝ մի երկու տառերի վրա կամ լուսանցքում Հայկական ձայնանիշերով գրված եղանակները»¹⁷:

Ըստ Աբեղյանի՝ Ա. Սեդրակյանի «Քնար մշեցուց և վանեցուց» ուսումնասիրությանը Կոմիտասը ծանոթացել է 1890 թ. և Աբեղյանի խորհրդով էլ այն ձեռք է բերել: Այս տվյալը փոքր-ինչ կասկածելի է թվում, քանզի քիչ հավանական է, որ ապրելով և սովորելով Էջմիածնում Կոմիտասին ծանոթ չլինեին ուսյն Էջմիածնի տպարանում 1874 թ. լույս տեսած Ա. Սեդրակյանի այդ հան-

¹⁶ Ս ա մ վ ե լ յ ա ն. 2007, 101:

¹⁷ Ա բ ե ղ յ ա ն. 1975, 432:

րահայտ աշխատությունը, որն իր տեսակի մեջ առաջիններից էր և էջմիածնական միաբանների միջավայրում քննարկվողը¹⁸: Ավելին՝ Ա. վրդ. Սեդրակյանը (եպիսկոպոսական աստիճանը ստացել է 1882 թ.) Գևորգյան ճեմարանի դպրոցական բաժնի հայոց լեզվի ուսուցիչն էր և 1881–1882 թթ. ուսումնական տարիներին «քեթիմահիացի Սողոմոն Գևորգի Սողոմոնյանին» դասավանդել է «Կրոնի սրբազան պատմություն ու մայրենի լեզու» (շաբաթական 15 դաս)¹⁹: Հետևապես, լավ ճանաչել է Կոմիտասին: Ուստի կրկնենք, քիչ հավանական է, որ Կոմիտասն իր ուսուցչի այդ աշխատության գոյության մասին տեղյակ չլիներ և դրան ծանոթանար միայն հրատարակումից 16 տարի հետո, ինչպես նշում է Մ. Աբեղյանը:

Ա. Սեդրակյան, Ս. Ամատունի և Կոմիտաս

Ա. արք. Սեդրակյանն այն բարձրաստիճան հոգևորականներից էր, ով խիստ արժեքավոր ուսումնասիրություններ գրելուց բացի՝ ժողովրդական բանահյուսություն²⁰ էր նաև ուսումնասիրում: Լինելով Սինոդի անդամ և ճեմարանի տեսուչ՝ նա «մեծ մասնակցություն ուներ բոլոր գործերի մէջ ու ուղղություն էր տալիս ամբողջ կառավարությունը»²¹: Էջմիածնում նախադեպը հունեցող նրա «Քնար մշեցուց եւ վանեցուց» աշխատասիրության լույս աշխարհ գալը, ինչպես ասվեց, խթան է եղել ոչ միայն Ս. վրդ. Ամատունու, այլև Կոմիտասի երաժշտական բանահավաքչական հետագա գործունեության համար: Դեռ ավելին. Ս. վրդ. Ամատունու համար, կարելի ասել, որ Ա. Սեդրակյանը եղել է նրա հոգևոր հայրը: Ս. վրդ. Ամատունուն Էջմիածնի սբ. Շողակաթի փոխկանաչայր նշանակելու հարցում (1896 թ.)²² մեծապես նպաստել է Ա. Սեդրակյանը, ով այդ ժամանակ Աստրախանի ու Կովկասի թեմակալն էր, ինչպես նաև սբ. Շողակաթի վանահայրը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ս. վրդ. Ամատունու արխիվում պահվող Ա. եպ. Սեդրակյանին հասցեագրված նամակները²³:

Կոմիտասի և Ա. Սեդրակյանի անմիջական հարաբերությունների մասին, ցավոք, տեղեկություններ չկան: Սակայն հայտնի է հետևյալը. երբ Խրիմյան Հայրիկի հրամանով աշխատանքից ազատվեց Քրիստափոր Կարա-Մուրզան²⁴,

¹⁸ Նկատենք, որ այդ տարիներին պաշտոնական էջմիածինը հրատարակում էր բացառապես կրոնական բնույթի ուսումնասիրություններ, իսկ հայ բանահյուսությունն ու ազգագրությանը վերաբերող նյութերը տպագրվում էին Հայաստանից դուրս՝ Կ. Պոլսում, Վենետիկում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Կարկաթալում և այլն: Հետևաբար, Ա. Սեդրակյանի աշխատության լույս ընծայումն իրապես մեծ իրադարձություն էր:

¹⁹ Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 1882, 410:

²⁰ Ս ե դ ր ա կ յ ա ն. 1872, Ս ե դ ր ա կ յ ա ն. 1891:

²¹ Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն. 1907, 51–54:

²² Տ ե 'ս Մատենադարան, Ս. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 70 (անտիպ):

²³ Մատենադարան, Ս. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 66, 67, 86, 88, 114, 115 (անտիպ):

²⁴ Ք. Կարա-Մուրզան (1853–1902) հայ երաժշտության պատմության մեջ առաջինը հաստատեց բազմաձայնությունը, և նրա ջանքերի շնորհիվ ժողովր-

ով ընդամենը մեկ տարի դասավանդեց ճեմարանում (1892–1893 թթ.), և փոխարենը երգեցողության ուսուցիչ նշանակվեց Սողոմոն սարկավազը, հայ հասարակության մի մասին կաթողիկոսի որոշումը խիստ մտահոգեց, իսկ մյուս մասին՝ գոհացրեց: «Նոր Դար»-ի համարներից մեկի «Գրոնիկոն» բաժինը հայտնում է. «Էջմիածնից. — Երգեցողութեան ուսուցիչ Կարա-Մուրզայի պաշտոնից արձակուելու առթիւ այստեղ (Թիֆլիս — Մ. Տ.) զարմանք են յայտնում, թէ ինչպէս նա համաձայնուել է մի որեւէ պաշտոն վարել Էջմիածնում, ուր Մայր Աթոռն է: Կան հանգամանքներ, որոնց նայած նա ինքը չպէտք է իրեն թոյլ տար բնակութիւն հաստատուելու Էջմիածնում և պաշտոն ստանձնելու հոգևոր ճեմարանում (հավանաբար, նկատի են ունեցել Կարա-Մուրզայի կաթողիկ լինելը — Մ. Տ.): Այդ իսկ պատճառով նրա արձակման լուրը գոհութեամբ ընդունեց Միաբանութիւնը»²⁵:

Ա. Սեդրակյանն այդ տարիներին ճեմարանի տեսուչի պաշտոնակատարն էր և Վեհի այդ որոշմանը հետևյալ կերպ արձագանքեց. «... Ձեր հրամանու Կարա-Մուրզային հրաժարեցրի և նրա տեղը նշանակեցի Սողոմոն սարկավազին, սրա հետ ընդունեցեք իմ հրաժարականը»²⁶: Այս հրաժարականն իր տեսակի մեջ աննախադեպ էր: «Մուրճը» նույնպես արձագանքեց. «Ճեմարանի երգեցողութեան ուսուցիչ պ. Կարա-Մուրզան հրաժարեցրած է իւր պաշտոնից: Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը հրաժարական տւեց, ճեմարանի տեսչի պաշտոնով նշանակուած է Սարգիս եպ. Տէր-Գասպարեան, երգեցողութեան ուսուցիչ նշանակուած է Սողոմոն սարկավազը»²⁷: Հավելյալ փաստարկներ չունենալով՝ ղեկավար է որեւէ գնահատական տալ Ա. Սեդրակյանի այդ որոշմանը. պետք է ենթադրել, որ նրա որոշումը ոչ թե ընդդէմ Կոմիտասի էր, այլ՝ կողմ Կարա-Մուրզայի: Խնդիրն այն էր, որ պաշտոնական Էջմիածնի կարծիքը հաճախ ձևավորում էին մտքով և գիտելիքով սահմանափակ կղերականներ, ովքեր դեմ էին ցանկացած նորամուծության՝ այդ թվում և բազմաձայնությանը: Դրա վառ ապացույցը Կյուրեղ եպս. Սրապյանցի չըջաբերականն էր. «Աստուծոյ մեկ է և երգեցողութիւնն էլ մեկ ձայնով պետք է լինի»²⁸: Նման տեսակի հոգևորականները Կարա-Մուրզայի կազմակերպած բազմաձայն երաժշտության համերգներն այցելում էին տապալելու հատուկ նպատակով: Որոշ ժամանակ անց նույն խնդրի առաջ կանգնեց նաև Կոմիտաս վարդապետը, և ճնշումներին չզիջմանալով լքեց Էջմիածինն ու հաստատվեց Կ. Պոլսում:

Սիմոն Վրացյանի հուշերը

Ս. վրդ. Ամատունու և Կոմիտասի համատեղ գործունեության մասին տեղեկությունները բավականին քիչ են: Եվ այդ առումով արժեքավոր են Կոմիտասի մասին Գևորգյան ճեմարանի սան, ՀՅԴ նշանավոր գործիչ Սիմոն Վրացյանի հուշերը: Նա, մասնավորապես, գրում է, որ Կոմիտասը սիրել է

դական երգի մշակումն առանձին նշանակություն ձեռք բերեց (տե՛ս Մ ու ը - ր ա դ յ ա ն. 1956):

²⁵ «Նոր Դար» (Թիֆլիս), 26. X. 1893:

²⁶ «Նոր Դար», 26. X. 1893:

²⁷ «Մուրճ» (Թիֆլիս), 1893, № 10, 1604:

²⁸ Մ ու ը ր ա դ յ ա ն. 1950, 104–106:

զբոսնել «Ներսիսյան լճի» մոտակա այգիներում: Ի դեպ, հենց այդպիսի պահերից մեկն էլ իր կտավում՝ «Կոմիտասն էջմիածնի լճափին» (1893 թ.), հավերժացրել է անվանի գեղանկարիչ Եղիշե Թադևոսյանը: Նաև պահպանվել է մի ուշագրավ լուսանկար, որտեղ Կոմիտասը նստած է Ներսիսյան լճի ափին²⁹: Նկատենք նաև, որ Ներսես Աշտարակեցու կաթողիկոսության օրոք (1843–1857 թթ.) դպրոցաշինության և լուսավորության ոլորտում մի շարք բարեփոխումների հետ՝ Մայր Աթոռում կատարված շինարարական ուշագրավ նախագծերից էին «Ներսիսյան լիճ» կոչված ջրավազանի և դրան կից անտառի հիմնումը, որը ճեմարանականների սիրելի վայրերից մեկն էր: Ծեմարանցիները «նշանավոր վիճաբանող էին», քանզի սիրում էին քննարկել և վիճել ընթերցած գրականության շուրջ: Նրանց մասին կատակով ասում էին՝ «Գնանք լճի ափ, վիճենք»³⁰:

Կոմիտասն իր աշակերտների հետ սիրում էր այցելել Հայաստանի պատմական տարբեր վայրեր, որից մեկն էլ Զվարթնոց տաճարն էր³¹: Ս. Վրացյանը նշում է. «... մի ուրիշ անգամ էլ, Կիրակի առաւօտ կանուխ, Կոմիտասը տարաւ մեզ Օշական՝ ուխտի Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին: Բաւական տարածութիւն ուռքով անցանք Արարատեան քարքարոտ դաշտով ... Թեթեւ քայլելով կտրեցինք դաշտի ձամբան, անցանք միջով մագլցեցինք վեր եւ ծնրադրեցինք Սուրբ Մեսրոպի գերեզմանի առջեւ: Կոմիտասը վերացած լուռ աղոթում էր ծունկի եկած: Այն ժամանակ դեռ չէինք հասկանում, որ մի սուրբ Մեսրոպ էլ ինքը պիտի լինէր նոր ժամանակների համար: Ապա խմբով մասնակցեցինք պատարագի արարողութեան եւ գյուղի քահանայի ճաշը վայելեցինք ... Առիթից օգտվելով, Կոմիտասի խնդրանք, քահանան հաւաքեց գիւղի նշանաւոր երգասացներին եւ Կոմիտասը իր «փո, է, վէ»³²-ով ձայնագրեց մի շարք ժողովրդական երգեր»³³:

Ս. Վրացյանը չի նշում՝ Օշականում ու՞մ են այցելել ու հյուրընկալել, ինչպես նաև՝ ու՞մ է ձայնագրել Կոմիտասը. դա, անկասկած, Ամատունին էր՝ Կոմիտասի սիրելի ուսուցիչ Սահակ վարդապետը: Զի հիշատակվում նաև գյուղի քահանայի անունը, ով լավ հյուրասիրություն էր պատրաստել, մինչդեռ նա Ս. վրդ. Ամատունու հորեղբայր Եսայի Ամատունին էր՝ Ամատունու առաջին ուսուցիչը և Օշականի քահանայապետը: Ի դեպ, վերջինս իր հայրենի գյուղում, Ամատունիների իշխանական ուստան՝ Օշականում, Սբ. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու վերականգնման (1879 թ.), գմբեթի վերակառուցման (1914 թ.) և Սբ. Մեսրոպական դպրոցի կառուցման նախաձեռնողն է եղել:

²⁹ Այդ լուսանկարը մեզ սիրով տրամադրել է էջմիածին քաղաքի պատմության թանգարանի տնօրեն Անժելա Թադևոսյանը:

³⁰ Տե՛ս Վ. ր ա ց ե ա ն. 1955, 91:

³¹ Զվարթնոց տաճարի (643–652 թթ.) ավերակները XX դարի սկզբին ամբողջովին ծածկված էին հողով, և առաջին պեղումները կատարել է ինչիկ վրդ. Դադյանը (1901–1907 թթ.), որին այցելության գնաց Կոմիտասն աշակերտների հետ: Իր՝ Հայտնի արցախյան «Զի՛գ տու, քաշի» (Վարանդայի շրջան) գութաներգի առաջին ձայնագրությունը Կոմիտասը կատարել է հենց իւ. Դադյանից:

³² Նկատի ունի Հ. Լիմոնջյանի ստեղծած հայկական ձայնագրության համակարգի նշանները:

³³ Վ. ր ա ց ե ա ն. 1955, 91:

Քահանա Եսայու բարեգործական նախագծերին թևակոխելուն և այլապես որդին՝ Նիկողիմոս Ամատունին³⁴:

Ս. վրդ. Ամատունու սիրելի երգը

Պահպանվել է Ս. վրդ. Ամատունու մի հին լուսանկար, որի վրա գրված է. «Սահակ վարդապետ Ամատունի ... Երգում էր վերին աստիճանի լավ և համով. «Ձայն տուր, իմ ծովակ»-ը նրա սիմվոլն էր»³⁵: Ուշագրավ է, որ տողերի հեղինակը՝ նրա զարմիկը, Ս. վրդ. Ամատունու ծավալուն երկացանկից առանձնացրել է կոմիտասյան «Ձայն տուր, իմ ծովակ»-ը: Կոմիտասի հեղինակած այդ երգն առավել հայտնի էր «Ծովակ» անվամբ, որը նա նվիրել էր անվանի երգչուհի Մարգարիտ Բաբայանին: Բնագրում նշված է. «Նվեր շնորհալի օրիորդ Մարգարիտ Բաբայանին. Կոմիտաս վարդապետ. Ս. Էջմիածին, 1901, նոյեմբերի 12»³⁶: 1955-ին Ֆրանսիայից նոտաները ստանալուն պես Ռոբերտ Աթայանը հրապարակեց «Ծովակ» երգի լուսապատճենը, և հայ ունկնդիրն առաջին անգամ ծանոթացավ Կոմիտասի այդ սքանչելի ստեղծագործությանը³⁷: Կոմիտասի ֆոնդում³⁸ պահվում է այդ նույն երգի մեկ այլ մշակում՝ շարադրված ջութակի և դաշնամուրի համար (e-moll), որը, ըստ Ռ. Աթայանի, նախատեսված է եղել անվանի ջութակահար Դավիթ Դավթյանի³⁹ համար: Ի դեպ, «Ծովակ» երգ-նոմանսը ստեղծվեց Րաֆֆու «Աղթամարա վանքը» ճանապարհագրական աշխատության վերջաբանի 2-րդ հոդվածի խոսքերով, երբ ազգային-ազատագրական գաղափարները վերազարթոնք էին ապրում:

³⁴ Նկատենք, որ Ն. Ամատունին (1859–1946 թթ.) կրթություն է ստացել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա՝ Ս. Պետերբուրգի համալսարանում: Դեռևս 1826 թ. կայսր Նիկոլայ I-ի հատուկ հրամանով վերահաստատվել է նրա տոհմակիցների իշխանական տիտղոսը: Ցարական Ռուսաստանի հատուկ հանձնարարությունների գծով հանձնակատար, իսկական պետական խորհրդական իշխան Ն. Ամատունին մեծ դերակատարություն է ունեցել Հայաստանի քաղաքական կյանքում՝ բարեգործական հանգանակություններով մշտապես աջակցելով հայրենի գյուղին (Дмитриев. 2011, 45–50):

³⁵ Լրագրող, լուսանկարիչ Վահան Ամատունին (ծնվ. 1957 թ.) «Նիդերլանդական օրագիր» մեկնարկված ծրագրի շրջանակներում Ամատունիների շառավիղի մեծանուն գործիչների, այդ թվում նաև՝ Ս. վրդ. Ամատունու կյանքի վերաբերյալ բացառիկ արժեք ունեցող լուսանկարներ է հրապարակել (տե՛ս https://www.ni.doragir.com/2018/12/blog-post_49.html):

³⁶ Կոմիտաս. 1976, 194–195:

³⁷ Աթայան. 1955, 42–47:

³⁸ ԳԱԹ, Կոմիտասի ֆոնդ, № 559:

³⁹ Դ. Դավթյանը (1880–1911) սովորել է Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում, այնուհետև՝ Բրյուսելի կոնսերվատորիայում (միջազգային մրցույթի դափնեկիր, 1904 թ.): Համերգներով հանդես է եկել Եվրոպայում, Ռուսաստանում, Կովկասում: Դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում ու համադրածակցել Ա. Տիգրանյանի, Ռ. Մելիքյանի և այլ երաժիշտների հետ: Դավթյանի վերջին համերգը եղել է Թուրքիայի Մարգվան քաղաքում, որտեղ էլ մահացել է սրտի կաթվածից (ապրիլի 24):

Մեծ ժողովրդականություն վայելող այս երգը հաճախ հնչում էր հենց Կոմիտասի կատարմամբ, երբ ինքն իրեն նվագակցելով՝ երգ-ուրախությամբ կերտում էր պատանի Նժդեհի կերպարը: Այն, որ Կոմիտասյան «Ծովակը» Ս. վրդ. Ամատունու սիրված երգերից էր, փաստում է հենց այն հավելյալ իրողությունը, որ Ամատունին ոչ միայն հետևում էր, այլև քաջաձանոթ էր Կոմիտասի գործունեությանը, համախոհ էր և կիսում էր իր նախկին աշակերտի գեղագիտական հայացքները: Ըստ այդմ, հարկ ենք համարում ներկայացնել Կոմիտասի «Ջա՛յն տուր, ո՛վ ծովակ» երգի նոտագրությունը.

Ջա՛յն տուր, ո՛վ ծովակ

Ջա՛յն տուր, ո՛վ ծո - վակ, ին - չո՛ւ լը -
 ում ես, ող - բա - կից լի - նել չը - կա - միս դըժ -
 բախ - - - տիս: Շար - ժե - ցե՛ք, զե - փյուռք
 ա - լի - թը վետ - վետ, խառ - ներ ար - տա -
 սունքս այս ջը - րե - րի հետ, խառ - - - -
 նե՛ք ար - - - - տա - - - - սունքս
 այս ջը - րե - րի հետ:

ԳԱԹ-ում Կոմիտասի ֆոնդում, մի ուշադրավ փաստաթուղթ կա, որտեղ նշված է, որ 1893 թ. Կոմիտասը ճեմարանի աշակերտներից ձայնագրել է երգեր: Այդ ձայնագրությունների մեջ հիշատակվում է նաև Ս. վրդ. Ամատունու անունը, ումից նա գրառել է 15 հոգևոր եղանակ. Կոմիտասի ձեռքով գրված է. «Երգեց արժանավոր աբեղա Սահակ Ամատունին»⁴⁰:

Հավելենք. Կոմիտասի գրառումներում հանդիպում են երգեր, որոնց ձայնագրության վայրը նշված է՝ «Օշական»: Ենթադրում ենք, որ դրանք Կոմիտասը ձայնագրել է Ս. վրդ. Ամատունու երգածից: Թե որքա՞ն երգ է գրառել Կոմիտասն Ամատունուց, դժվար է ասել: Սակայն մեզ հայտնի մի քանի խա-

⁴⁰ ԳԱԹ, Կոմիտասի ֆոնդ, № 332:

ղիկ, այդուհանդերձ, մատնանշենք՝ «Հանդումը մնաց յարս», «Սարերը կրակ եմ արել», «Վայ, քյամարս»⁴¹:

... Ս. վրդ. Ամատունու արխիվում զգալի թիվ են կազմում նրա նամակները, որոնք Հայագիտության համար մեծ արժեք են ներկայացնում: Նամակներ՝ հասցեագրված ժամանակի երեկելի այրերին և հայ ժողովրդի պանծալի զավակներին՝ Հովհաննես Հովհաննիսյանին, Կարապետ Կոստանյանին, Նիկողայոս Աղոնցին, Վահրամ Փափագյանին, Մաղաքիա Օրմանյանին, Գրիգոր Խալաթյանցին, Ներսես Ակինյանին, Խրիմյան Հայրիկին, Գարեգին Հովսեփյանին, Անտուան Մեյերին, Սուքիաս Պարզյանին, սակայն չկան Կոմիտասի նամակներից:

Կոմիտասի արխիվում նույնպես չկան նամակներ, որոնք հասցեագրված լինեին իր սիրելի ուսուցիչ՝ Ս. վրդ. Ամատունուն: Պետք է ենթադրել, որ նամակագրության կարիք չի էլ եղել, քանզի այդ տարիներին երկուսն էլ ապրել են Էջմիածնում և հաճախ հանդիպել են ճեմարանում:

Եթե Կոմիտաս Վարդապետի արխիվը, հետևապես կյանքն ու գործունեությունը զգալի չափով ուսումնասիրված է, ապա Ս. վրդ. Ամատունու արխիվը լուրջ ուսումնասիրության կարիք ունի, որը հնարավորություն կտա լուսաբանել հայ շարականագետ, ձայնագրագետ, մատենագետ, ձեռագրագետ, բառարանագետ, բանասեր, բանահավաք, Սուրբ Էջմիածնի միաբանության անդամ Ս. վրդ. Ամատունու կյանքն ու գործունեությունը:

Եզրակացություն

Ս. Ամատունին և Կոմիտասը ոչ միայն հոգևորականներ էին, այլև ժամանակի լուսավորչալ հայորդիներ, ովքեր անուրանալի հետք թողեցին հայ երաժշտական գիտական մտքի կայացման ու զարգացման մեջ:

Մարիաննա Տիգրանյան — արվ. թ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ երաժշտագիտություն, հայ ֆոլկլորագիտություն, ազգային ավանդական երաժշտություն: Հեղինակ է ավելի քան 30 հոդվածի: tigranyan.marianna@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1975, Հիշողություններ Կոմիտասի մասին. — Երկեր, հ. 7, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, էջ 431–439:

Ադամյան Ա. 1973, Սահակ Ամատունու արխիվը. — ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 105:

Աթայան Ռ. 1955, Կոմիտասի ձեռագրերը. — «Սովետական արվեստ» (Երևան), № 4, էջ 42–47:

Ամատունի Ս. 1911, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Ի Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 198 էջ:

⁴¹ Տե՛ս Կոմիտաս. 2003, № 313–315, 140–141:

Ամատունի Ս. 1912, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 707 էջ:

Բեիբուդյան Ս. 1970, Սահակ Ամատունի.– «Էջմիածին» (Էջմիածին), № 4, էջ 31–35:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Երգարանների ֆոնդ, № 33, Սահակ Ամատունու երգարան:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կոմիտասի ֆոնդ, № 332, № 559:

Կոմիտաս. 1976, Երկերի ժողովածու: Խմբերգեր և մեներգեր, հ. 4, խմբ. Ռ. Աթայան, Երևան, «Հայաստան», 203 էջ:

Կոմիտաս. 2003, Երկերի ժողովածու (14 հատորով), հ. 12, խմբ. Ռ. Աթայան, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 208 էջ:

Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 126, թ 2:

Հայ ժողովրդական երգեր և նվագներ. 2014, Մատենաշար, հ. XI, խմբ.՝ Ն. Աթանասյան, Երևան, «Ամրոց գրուպ», 120 էջ:

Հովհաննիսյան Պ. 2009, Նշանավոր ձեռնարանականներ, հ. 2, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 503 էջ:

Ձայնագրեալ քաղուածք օրինութեանց. Հետեալք օրինութեանց Տէրունական Տօնիս այլ եւ կարգ հանգստեան անդաստանի շարականաց. ի լրումն ծայնքաղի. 1882, Ի Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 505 էջ:

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, Ս. վրդ. Ամատունու արխիվ, ֆ. 37, թղթ. 39, վավ. 60, 66, 67, 70, 86, 88, 137 (անտիպ):

«Մուրճ» (Թիֆլիս), 1893, № 10:

Մուրադյան Մ. 1950, Քրիստափոր Կարա-Մուրզա. Կյանքը և երաժշտական-հասարակական գործունեությունը, Երևան, «Հայպետհրատ», 1950, 151 էջ:

Մուրադյան Մ. 1956, Բ. Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 288 էջ:

Նազարյան Ն. 1993, Սահակ Վ. Ամատունին և նրա ժողովրդական երգերի ձայնագրեալ ժողովածուն, Երևան (ԵՊԿ, դիպլոմային աշխատանք, անտիպ):

Նահապետյան Ա. 1882, Ազգային տեսութիւն. – «Արարատ» (Էջմիածին), № 11, էջ 383–412:

Նոր ազգային երգարան. 1878, խմբ.՝ Պ. Թ. Հլաճեան, Ռոստով, «Յովհաննու Տէր-Աբրահամեան» տպ., 183 էջ:

«Նոր Դար» (Թիֆլիս), 26. X. 1893:

Շահան Սիմոն. 1954, Կոմիտաս Վարդապետ (հուշեր ծննդյան 85-ամյակի առթիվ). – «Էջմիածին» (Էջմիածին), № 10, էջ 25–28:

Սամվելյան Խ. 2007, Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունը.– «Էջմիածին» (Էջմիածին), № 5, էջ 92–109:

Սեդրակյան Ա. 1872, Հնութիւնք հայրենեաց գաւառին Երջակի, Էջմիածին Տպարանի Սրբոց Կաթողիկէ Էջմիածնի, 195 էջ:

Սեդրակյան Ա. 1874, Քնար մշեցւոց եւ վանեցւոց, Վաղարշապատ, Սբ. Էջմիածնի տպարան, 46 էջ:

Սեդրակյան Ա. 1891, Ամուսնական խնդիրներ, Մոսկւա, տպարան Մ. Բարխուդարեանի, 231 էջ:

Սոխակ Հայաստանի. 1888, Լիակատար ազգային երգարան, հրատ.՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց, Ս. Պետերբուրգ, «Ի. Ն. Սկորոխոդովի» տպ., 372 էջ:

Սոխակ Հայաստանի. 1890, Ազգային լիակատար երգարան, կազմ.՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց, Մոսկուա, տպարան Մկրտիչ Բարխուդարեանի, 330 էջ:

Սոխակ Հայաստանի. 1912, Ազգային լիակատար երգարան, կազմ.՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց, Բագու Ելեքտրաշարժ տպ-ն «Բագու» լրագրի, 328 էջ:

Վրացեան Ս. 1955, Կեանքի ուղիներով. Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ա, Գահիրե, «Յուսաբեր», 295 էջ:

Տեր-Սինայան Ե. 1907, Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակյան. – «Արարատ» (Էջմիածին), № 1, էջ 51–54:

Րաֆֆի. 1957, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Հայպետհրատ», 618 էջ:

Дмитриев С. 2011, Князь Аматауни и его экспедиция в район Персидского залива (1904–1907 гг.). – «Восток и Афро-Азиатское общество: история и современность» (М.), № 2, с. 45–50.

https://www.nidoragir.com/2018/12/blog-post_49.html.

ДВА АРХИМАНДРИТА: СААК АМАТУНИ И КОМИТАС (Воспоминания современников)

МАРИАННА ТИГРАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: С. арх. Аматауни, Комитас, Эчмиадзинская семинария Геворкян, М. Абесян, А. Седракан, Ш. Симон, С. Врацян, Эчмиадзин, «озеро Нерсисян», Ошакан, музыкальный фольклор, народная песня.

70–80-е гг. XIX столетия – период становления армянской музыкальной фольклористики, первоначальным этапом которого была запись и соби- рание народных песен. Особую роль в этом процессе сыграли Христофор Кара-Мурза, Никогайос Тигранян, Макар Екмялян, Аршак Брутян, Степан Демурян. Среди этих великих сынов армянского народа – имя Саака архимандрита Аматауни (1856–1920), который стоял у самых истоков армянской музыкальной фольклористики. Под руководством известного музыканта-теоретика Н. Ташчяна, который занимался записью армянских духовных песнопений, С. Аматауни собрал и записал новоармянской ното- писью множество церковных гимнов-шараканов, которые вошли в состав «Шаракноца» (сборник гимнов). Он одним из первых стал записывать армянский музыкальный фольклор и составил сборник народных песен (1884). Научные труды С. Аматауни очень высоко оценила армянская ин- теллигенция. По свидетельству современников, Аматауни был любимым преподавателем Комитаса, и именно его творческие воззрения имели боль- шое значение в становлении великого композитора. Свои первые записи народных песен Комитас сделал после знакомства с Аматауни – в 1884 году. Два архимандрита – Аматауни и Комитас – были не только духов- ными отцами, но и просвещенными сынами своего отечества, оставивши- ми неоспоримый след в становлении и развитии армянской музыкальной научной мысли.

Марианна Тигранян – к. иск., старший научный сотрудник отдела народной музыки Института искусств НАН РА, преподаватель кафедры армянской музыкальной фольклористики Ереванской государственной консерватории им. Комитаса. Научные интересы: музыковедение, армянская фольклористика, традиционная национальная музыка. Автор более 30 статей. tigranyan.marianna@mail.ru

TWO ARCHIMANDRITES:
SAHAK AMATUNI AND KOMITAS
(Memories of contemporaries)

MARIANNA TIGRANYAN

Summary

Key words: Arch. S. Amatuni, Komitas, Gevorgyan Seminary of Etchmiadzin, Sh. Simon, M. Abeghyan, A. Sedrakyan, S. Vratsyan, "Lake Nersisyan", Oshakan, musical folklore, folk song.

The 70s-80s of the 19th century was the period of the formation of Armenian musical folkloristics, whose initial stage incorporated the recording and collection of folk songs. Christopher Kara-Murza, Nikoghayos Tigranyan, Makar Yekmalyan, Arshak Brutyan, Stepan Demuryan played a special role in this process. Among these great sons of the Armenian people is the name of Archimandrite Sahak Amatuni (1856-1920), who stood at the very origins of Armenian musical folkloristics. Under the guidance of the prominent theorist-musician N. Tashchyan, who was engaged in recording Armenian spiritual chants, S. Amatuni collected and recorded numerous church hymns-sharakans in the new Armenian notation, which were included in the "Sharaknots" (collection of hymns). He was one of the first to record Armenian musical folklore and compiled a collection of folk songs (1884). The scientific works of S. Amatuni were highly estimated by the Armenian intelligentsia. According to contemporaries, Amatuni used to be Komitas's favorite teacher, and it was his very creative views that were of great importance in the development of the great composer. Komitas made his first recordings of folk songs after meeting Amatuni in 1884. The two archimandrites – Amatuni and Komitas were not only spiritual fathers, but also the enlightened sons of their fatherland, who left an indisputable mark on the formation and development of the Armenian scientific musical thought.

Marianna Tigranyan – Candidate of Sciences in Arts, Senior Researcher at the Department of Folk Music of the NAS RA Institute of Arts, Lecturer at the Chair of Armenian Musical Folkloristics of the Yerevan State Conservatory after Komitas. Scientific interests: musicology, Armenian folkloristics, traditional national music. Author of over 30 articles. tigranyan.marianna@mail.ru